



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» հունվարի 2021 թվականի N 05-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով, **որոշում եմ**.

1. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին և ՍՊԸ-ներին 2021 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների իրացմամբ, հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ՝

1) «Հասմիկ և եղբայներ» ՍՊԸ-ին, տնօրեն Սայաթ Գրիգորյան՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 19-րդ փողոցի թիվ 1/1 հասցեում,

2) Սերգեյ Հրաչի Ներսիսյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 6/12 հասցեում,

3) անհատ ձեռնարկատեր Արթուր Աղաբեկի Ղահրամանյանին՝ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 3 հասցեում:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ տնտեսվարող սուբյեկտներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ԹՈՒԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հունվարի 11
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» հունվարի 2021 թվականի N 04-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, **որոշում եմ**.

1. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին՝ 2021 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով՝

1) Նատելա Վաղիմիրի Հողմրցյանին՝ Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 5-րդ փողոցի թիվ 34/1 հասցեում,

2) Զորիկ Սերյոժայի Գալստյանին՝ Զրվեժ համայնքի Զովք գյուղի Գլխավոր խճուղի թիվ 14/2 հասցեում,

3) Ռոման Ատոմի Մովսիսյանին՝ Զրվեժ համայնքի Զովք գյուղի 3-րդ փողոցի թիվ 1 հասցեում:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ տնտեսվարող սուբյեկտներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐԹԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հունվարի 11
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» հունվարի 2021 թվականի N 03-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 265-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 490-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 8-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով կազմավորելու և համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 251-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 265-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման առաջին կետում «Բարսեղյան Արտավազը» բառերը փոխարինել «Տիգրանյան Սևակ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՈՐԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հունվարի 11
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«8» հունվարի 2021 թվականի N 02-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, **որոշում եմ.**

1. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին՝ 2021 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով՝

1) Օլեգ Յուրիի Առուշանյանին՝ Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 6-րդ փողոցի թիվ 26 հասցեում,

2) Մարգարիտ Վահանի Կարապետյանին՝ Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 6-րդ փողոցի թիվ 31 հասցեում,

3) Մարինե Ալբերտի Կիրակոսյանին՝ Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 120/1 հասցեում,

4) Նունե Մանվելի Կիրակոսյանին՝ Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 18 հասցեում,

5) Լյուդմիլա Պալյայի Գրիգորյանին՝ Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Երիտասարդության փողոցի թիվ 22 հասցեում,

6) Նաիրա Ռուբենի Ղանդիլյանին՝ Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Լուսավորության փողոցի թիվ 14 հասցեում:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ տնտեսվարող սուբյեկտներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՌՈՔԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հունվարի 8
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«8» հունվարի 2021 թվականի N 01-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, **որոշում եմ.**

1. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին՝ 2021 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով՝

1) Արուսյակ Շուրայի Մելիքսեթյանին՝ Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 84 հասցեում,

2) Արուսյակ Ասատուրի Ազիզյանին՝ Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 50 հասցեում,

3) Արիֆոն Ռադիկի Շահգելոյանին՝ Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ամառանոցային փողոցի թիվ 1 հասցեում,

4) Գոհար Արծրունի Հայրապետյանին՝ Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 14 հասցեում,

5) Սամվել Աշխարաբեկի Մելիքսեթյանին՝ Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 2-րդ փողոցի թիվ 1 հասցեում,

6) Արմեն Վահարիճի Հովակիմյանին՝ Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 142 հասցեում:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ տնտեսվարող սուբյեկտներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՌՈՒԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հունվարի 8
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» դեկտեմբերի 2020 թվականի N 966-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արտաշես Վալերիի Զոունայանի (ծնված՝ 1981 թվականի սեպտեմբերի 19-ին) դիմումը՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ թաղամասի թիվ 7/6/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման 2533,0 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում առկա ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված անշարժ գույքը՝ քարե շինությունը՝ 523,3 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 564,54 քառ.մետր), քարե շինությունը՝ 48,8 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 54,0 քառ.մետր), քարե շինությունը՝ 51,8 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 56,8 քառ.մետր), քարե շինությունը՝ 61,0 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 67,6 քառ.մետր), քարե շինությունը՝ 29,7 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 35,9 քառ.մետր), քարե շինությունը՝ 20,0 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 26,3 քառ.մետր), զուգարանը՝ 28,1 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 40,0 քառ.մետր), պարիսպը՝ 9,7 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 9,7 քառ.մետր) և ծածկը՝ 85,9 (արտաքին մակերեսը՝ 111,5 քառ.մետր), իրեն օտարելու մասին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 22082018-07-0087, տրված 2018 թվականի օգոստոսի 22-ին, անհատ ձեռնարկատեր Կարեն Մանուչարյանի կողմից 2018 թվականի հուլիսի 6-ին տրված հողամասի հատակագիծ, վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագիր, վավերացված 2019 թվականի ապրիլի 2-ին):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35 և 35.1-րդ կետերով, **որոշում եմ.**

1.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ թաղամասի թիվ 7/6/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման 2533,0 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված անշարժ գույքը՝ քարե շինությունը՝ 523,3 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 564,54 քառ.մետր), քարե շինությունը՝ 48,8 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 54,0 քառ.մետր), քարե շինությունը՝ 51,8 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 56,8 քառ.մետր), քարե շինությունը՝ 61,0 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 67,6 քառ.մետր), քարե շինությունը՝ 29,7 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 35,9 քառ.մետր), քարե շինությունը՝ 20,0 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 26,3 քառ.մետր), զուգարանը՝ 28,1 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 40,0 քառ.մետր), պարիսպը՝ 9,7 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 9,7 քառ.մետր) և ծածկը՝ 85,9 (արտաքին մակերեսը՝ 111,5 քառ.մետր), օտարել կառույցն իրականացրած Արտաշես Վալերիի Զոունայանին:

2.Պարտավորեցնել Արտաշես Վալերիի Զոունայանին՝ մուծելու հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 16 891 712 (տասնվեց միլիոն ութ հարյուր ինսուսմեկ հազար յոթ հարյուր տասներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, շինությունների վաճառքի արժեքը՝ 22 611 420 (քսաներկու միլիոն վեց հարյուր տասնմեկ հազար չորս հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հանձնարարել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանին՝ ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարների վճարումից հետո 10-օրյա ժամկետում գնորդի հետ կնքելու անշարժ գույքի օտարման պայմանագիր:

4. Ընդունել ի գիտություն, որ գույքի օտարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՌՈՒԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 30
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» դեկտեմբերի 2020 թվականի N 965-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՅՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶՎԱԾ
ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Անահիտ Արամի Մարգարյանի (ծնված 1955 թվականի հունվարի 01-ին) դիմումը՝ Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 1-ին փողոցի թիվ 1/52 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի կառուցապատման 47,7 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում իր կողմից ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 39,0 քառ.մետր մակերեսով (արտաքին մակերեսը՝ 47,7 քառ.մետր) ավտոտնակն իրեն օտարելու մասին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05062013-07-0051, տրված 2013 թվականի հունիսի 05-ին և անհատ ձեռնարկատեր Վալերի Գալստյանի կողմից 2013 թվականի մայիսի 23-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2 և 35-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 31-Ա որոշումը, **որոշում եմ.**

1.Համայնքային սեփականություն հանդիսացող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 1-ին փողոցի թիվ 1/52 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի կառուցապատման 47,7 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում իր կողմից ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 39,0 քառ.մետր մակերեսով (արտաքին մակերեսը՝ 47,7 քառ.մետր) ավտոտնակն ուղղակի վաճառքի կարգով օտարել կառույցն իրականացրած Անահիտ Արամի Մարգարյանին:

2.Պարտավորեցնել Անահիտ Արամի Մարգարյանին՝ մուծելու հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 215 795 (երկու հարյուր տասնհինգ հազար յոթ հարյուր ինսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, ավտոտնակի վաճառքի արժեքը՝ 124 020 (մեկ հարյուր քսանչորս հազար քսան) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Հանձնարարել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանին՝ ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարների վճարումից հետո 10-օրյա ժամկետում գնորդի հետ կնքելու անշարժ գույքի օտարման պայմանագիր:

4.Ընդունել ի գիտություն, որ գույքի օտարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ստանյան Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Անահիտ Արամի Մարգարյանին որոշման ընթացքի մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 30
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԿԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» դեկտեմբերի 2020 թվականի N 964-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Յուրիկ Պատվականի Բարսեղյանի (ծնված՝ 1959 թվականի ապրիլի 14-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ Զորադքյուր 1-ին զանգված 1-ին թաղամաս թիվ 15 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 0132918 վկայականը, տրված 1999 թվականի հուլիսի 15-ին, «ՊԻԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 21-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ՊԻԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Յուրիկ Պատվականի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Զորադքյուր 1-ին զանգված 1-ին թաղամաս թիվ 15 հասցեի հողամասում 2015 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1՝ այգետնակը 23,9 քառ.մետր, բաց պատշգամբը՝ 11,9 քառ.մետր, մանսարդը՝ 24,6 քառ.մետր, բաց պատշգամբը՝ 11,65 քառ.մետր, թիվ 2 ծածկը՝ 25,65 քառ.մետր, թիվ 3 օժանդակ շինությունը՝ 22,2 քառ.մետր, թիվ 4, 5 և 8 պարիսպները՝ ընդհանուր 7,0 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև 2-րդ հարկում առկա է ինքնակամ բացված երկու պատուհան և ինքնակամ բացված մեկ դուռ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1, 10, 11, 13 և 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Յուրիկ Պատվականի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Զորադքյուր 1-ին զանգված 1-ին թաղամաս թիվ 15 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների, ինքնակամ բացված երկու պատուհանների և ինքնակամ բացված մեկ դռան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերմիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Յուրիկ Պատվականի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Զորադքյուր 1-ին զանգված 1-ին թաղամաս թիվ 15 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Զրվեժ, գյուղ Զորադքյուր, 1-ին զանգված, 1-ին թաղամաս, թիվ 15:

2. Յուրիկ Պատվականի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զորադքյուր գյուղի 1-ին զանգվածի 1-ին թաղամասի թիվ 15 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված թիվ 1՝ այգետնակը 23,9 քառ.մետր, բաց պատշգամբը՝ 11,9 քառ.մետր, մանսարդը՝ 24,6 քառ.մետր, բաց պատշգամբը՝ 11,65 քառ.մետր, թիվ 2 ծածկը՝ 25,65 քառ.մետր, թիվ 3 օժանդակ շինությունը՝ 22,2 քառ.մետր, թիվ 4, 5 և 8 պարիսպները՝ ընդհանուր 7,0 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև 2-րդ հարկում առկա ինքնակամ բացված երկու պատուհանները և ինքնակամ բացված մեկ դուռը, համարել օրինական:

3. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Զրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 280 696 (երկու հարյուր ութսուն հազար վեց հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Յուրիկ Պատվականի Բարսեղյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔի ղեկավար՝



ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 30
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» դեկտեմբերի 2020 թվականի N 963-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արամ Վանուշի Դանդանի (ծնված՝ 1965 թվականի նոյեմբերի 6-ին) լիազոր ներկայացուցիչ Տիգրան Ռոբերտի Թադևոսյանի (ծնված՝ 1987 թվականի հունվարի 12-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով Արամ Վանուշի Դանդանին պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 25-րդ փողոցի թիվ 21 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1776335 վկայականը, տրված 2004 թվականի փետրվարի 5-ին, «ԳԵՈԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 24-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արամ Վանուշի Դանդանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 25-րդ փողոցի թիվ 21 հասցեի տնամերձ հողամասում 2018-2019 թվականներին ինքնակամ կառուցվել է թիվ 1՝ բնակելի տուն կիսանկուղը 183,25 քառ.մետր, աստիճանը՝ 3,8 քառ.մետր, բնակելի տուն 1-ին հարկը՝ 257,05 քառ.մետր, աստիճանը՝ 3,0 քառ.մետր, բնակելի տուն 2-րդ հարկը՝ 190,9 քառ.մետր, թիվ 2 ամառային խոհանոցը՝ 48,4 քառ.մետր, թիվ 3 սանհանգույցը՝ 8,94 քառ.մետր, թիվ 4 ծածկը՝ 6,0 քառ.մետր, թիվ 5 ծածկը՝ 7,56 քառ.մետր, թիվ 6 և թիվ 7 պարիսպները՝ ընդհանուր 26,06 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արամ Վանուշի Դանդանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 25-րդ փողոցի թիվ 21 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1.Արամ Վանուշի Դանդանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 25-րդ փողոցի թիվ 21 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված թիվ 1՝ բնակելի տուն կիսանկուղը 183,25 քառ.մետր, աստիճանը՝ 3,8 քառ.մետր, բնակելի տուն 1-ին հարկը՝ 257,05 քառ.մետր, աստիճանը՝ 3,0 քառ.մետր, բնակելի տուն 2-րդ հարկը՝ 190,9 քառ.մետր, թիվ 2 ամառային խոհանոցը՝ 48,4 քառ.մետր, թիվ 3 սանհանգույցը՝ 8,94 քառ.մետր, թիվ 4 ծածկը՝ 6,0 քառ.մետր, թիվ 5 ծածկը՝ 7,56 քառ.մետր, թիվ 6 և թիվ 7 պարիսպները՝ ընդհանուր 26,06 քառ.մետր արտաքին մակերեսով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006

թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 1 811 228 (մեկ միլիոն ութ հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնական կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արամ Վանուշի Դանդյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՌՈՐԵՆՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 30
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» դեկտեմբերի 2020 թվականի N 962-Ա

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ավետիք Աշոտի Սանթրոսյանը (ծնված՝ 1984 թվականի մայիսի 31-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0342-0007 կադաստրային համարի 1482,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության այգու նպատակային նշանակությունը փոխադրելու բնակավայրի հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հասարակական կառուցապատում իրականացնելու և նշված հողամասում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 18082020-07-0010, տրված 2020 թվականի օգոստոսի 18-ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2020 թվականի օգոստոսի 4-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը:

Կատարված ուսումնասիրությունից և անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Ավետիք Աշոտի Սանթրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0342-0007 կադաստրային համարի 1482,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողակտորում 2015 թվականին ինքնակամ կառուցվել են թիվ 1 բնակելի տունը՝ 176,48 քառ.մետր, թիվ 2 հենապատը՝ 3,62 քառ.մետր, թիվ 3 պարիսպը՝ 5,17 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 17, 18-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը և հաշվի առնելով այն, որ Ավետիք Աշոտի Սանթրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0342-0007 կադաստրային համարի հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում են.**

1.Ավետիք Աշոտի Սանթրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0342-0007 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության այգին՝ 1482,0 քառ.մետր մակերեսով, փոխադրել բնակավայրի հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հասարակական կառուցապատում իրականացնելու համար:

2.Ավետիք Աշոտի Սանթրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0342-0007 կադաստրային համարի 1482,0 քառ.մետր մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 5-րդ թաղամաս, թիվ 1/13:

3. Ավետիք Աշոտի Սանթրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 5-րդ թաղամասի թիվ 1/13 հասցեի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված թիվ 1՝ 176,48 քառ.մետր արտաքին մակերեսով բնակելի տան գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական նշանակության շինության:

4.Ավետիք Աշոտի Սանթրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 5-րդ թաղամասի թիվ 1/13 հասցեի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված թիվ 1 հասարակական նշանակության շինությունը՝ 176,48 քառ.մետր, թիվ 2 հենապատը՝ 3,62 քառ.մետր, թիվ 3 պարիսպը՝ 5,17 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

5.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228176 հաշվին պետք է վճարի հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 6 437 808 (վեց միլիոն չորս հարյուր երեսունյոթ հազար ութ հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ, N 900105228218 հաշվին՝ 963 404 (ինը հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր չորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

6.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարումները չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

7.Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման չորրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

8.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության պետական կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ավետիք Աշոտի Սանթրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԻ

ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 30
գ.Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» դեկտեմբերի 2020 թվականի N 961-Ա

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ավետիք Աշոտի Սանթրոսյանի (ծնված՝ 1984 թվականի մայիսի 31-ին) և Հերմինե Անդրանիկի Թադևոսյանի (ծնված՝ 1984 թվականի հուլիսի 20-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 07-057-0339-0043 կադաստրային համարի 1360,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության այգու նպատակային նշանակությունը փոխադրելու բնակավայրի հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հասարակական կառուցապատում իրականացնելու և նշված հողամասում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 25022019-07-0076, տրված 2019 թվականի փետրվարի 25-ին, «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի փետրվարի 13-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը:

Կատարված ուսումնասիրությունից և «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Ավետիք Աշոտի Սանթրոսյանին և Հերմինե Անդրանիկի Թադևոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 07-057-0339-0043 կադաստրային համարի 1360,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողակտորում 2013 թվականին ինքնակամ կառուցվել են թիվ 1 տնտեսական շինությունը՝ 28,01 քառ.մետր, թիվ 2 հենապատը՝ 3,55 քառ.մետր, թիվ 3 պարիսպը՝ 22,17 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 17, 18-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը և հաշվի առնելով այն, որ Ավետիք Աշոտի Սանթրոսյանին և Հերմինե Անդրանիկի Թադևոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 07-057-0339-0043 կադաստրային համարի հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում են.**

1.Ավետիք Աշոտի Սանթրոսյանին և Հերմինե Անդրանիկի Թադևոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 07-057-0339-0043 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության այգին՝ 1360,0 քառ.մետր մակերեսով, փոխադրել բնակավայրի հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հասարակական կառուցապատում իրականացնելու համար:

2.Ավետիք Աշոտի Սանթրոսյանին, Հերմինե Անդրանիկի Թադևոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 07-057-0339-0043 կադաստրային համարի 1360,0 քառ.մետր մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Զրվեժ, գյուղ Զրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 5/47:

3. Ավետիք Աշոտի Սանթրոսյանին, Հերմինե Անդրանիկի Թադևոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 5/47 հասցեի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված թիվ 1 առաջին հարկը՝ 28,01 քառ.մետր, թիվ 2 հենապատը՝ 3,55 քառ.մետր, թիվ 3 պարիսպը՝ 22,17 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

4. Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228176 հաշվին պետք է վճարեն հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 6 106 400 (վեց միլիոն հարյուր վեց հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, N 900105228218 հաշվին՝ 279 396 (երկու հարյուր յոթանասունինը հազար երեք հարյուր ինսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ՝ օրինականացման վճարը.

2) իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

5. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարումները չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1) իրականացնել հսկողություն սույն որոշման չորրորդ կետի նկատմամբ,

2) սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխություն պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

7. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության պետական կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ավետիք Աշոտի Սանթրոսյանին, Հերմինե Անդրանիկի Թադևոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՇԱԿԱՐ



ՌՈՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 30
գ.Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» դեկտեմբերի 2020 թվականի N 960-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Եղիշե Յուրիկի Գիշունցի (ծնված՝ 1974 թվականի փետրվարի 5-ին) և Գրետա Ալեքսեյի Աղաբեկյանի (ծնված՝ 1981 թվականի մայիսի 23-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 28-րդ փողոցի թիվ 12/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05112012-07-0362 վկայականը, տրված 2012 թվականի նոյեմբերի 5-ին, «ԳԵՈՏՈՊ» ՍՊԸ-ի կողմից 2020 թվականի նոյեմբերի 27-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈՏՈՊ» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Եղիշե Յուրիկի Գիշունցին և Գրետա Ալեքսեյի Աղաբեկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 28-րդ փողոցի թիվ 12/1 հասցեի տնամերձ հողամասում 2012-2017 թվականներին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տուն՝ 1-ին հարկը 132,69 քառ.մետր, 2-րդ հարկը՝ 131,64 քառ.մետր և մանսարդ 3-րդ հարկը՝ 131,64 քառ.մետր, թիվ 2 ծածկը՝ 15,17 քառ.մետր, թիվ 3 լողավազանը՝ 7,36 քառ.մետր, թիվ 4 թոնրատունը՝ 3,56 քառ.մետր, թիվ 5 շինությունը՝ 3,94 քառ.մետր, թիվ 6 ծածկը՝ 4,87 քառ.մետր և թիվ 8, 9, 10 և 11 պարիսպները՝ ընդհանուր 3,99 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Եղիշե Յուրիկի Գիշունցին և Գրետա Ալեքսեյի Աղաբեկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 28-րդ փողոցի թիվ 12/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերմիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1.Եղիշե Յուրիկի Գիշունցին և Գրետա Ալեքսեյի Աղաբեկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 28-րդ փողոցի թիվ 12/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված է թիվ 1 բնակելի տուն՝ 1-ին հարկը 132,69 քառ.մետր, 2-րդ հարկը՝ 131,64 քառ.մետր և մանսարդ 3-րդ հարկը՝ 131,64 քառ.մետր, թիվ 2 ծածկը՝ 15,17 քառ.մետր, թիվ 3 լողավազանը՝ 7,36 քառ.մետր, թիվ 4 թոնրատունը՝ 3,56 քառ.մետր, թիվ 5 շինությունը՝ 3,94 քառ.մետր, թիվ 6 ծածկը՝ 4,87 քառ.մետր և թիվ 8, 9, 10 և 11 պարիսպները՝ ընդհանուր 3,99 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 1 090 191 (մեկ միլիոն իննսուն հազար մեկ հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Եղիշե Յուրիկի Գիշունցին և Գրետա Ալեքսեյի Աղաբեկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՄԱԳԱՐ

ՌՈՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 30

գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» դեկտեմբերի 2020 թվականի N 959-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ
ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Գնել Վանյայի Գրիգորյանի (ծնված՝ 1964 թվականի հունվարի 17-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ Զորադբյուր գյուղ Բանակի փողոց թիվ 9/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2747027 վկայականը, տրված 2010 թվականի դեկտեմբերի 8-ին, անհատ ձեռնարկատեր Սուրեն Շախկյանի կողմից 2020 թվականի օգոստոսի 3-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Սուրեն Շախկյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Գնել Վանյայի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Զորադբյուր գյուղ Բանակի փողոց թիվ 9/1 հասցեի տնամերձ հողամասում 2017 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տունը՝ 135,67 քառ. մետր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի և 53-րդ կետի գ) ենթակետի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գնել Վանյայի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Զորադբյուր գյուղ Բանակի փողոց թիվ 9/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, բնակելի տունը կառուցված չէ ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Գնել Վանյայի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Զորադբյուր գյուղ Բանակի փողոց թիվ 9/1 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Զրվեժ, գյուղ Զորադբյուր, Բանակի փողոց, թիվ 9/1:

2. Գնել Վանյայի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զորադբյուր գյուղի Բանակի փողոցի թիվ 9/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ 135,67 քառ. մետր արտաքին մակերեսով, համարել օրինական:

3. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Զրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 352 742 (երեք հարյուր հիսուններկու հազար յոթ հարյուր քառասուններկու) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնական կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գնել Վանյայի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանի



ՌՈՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 30
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մեղրոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» դեկտեմբերի 2020 թվականի N 958-Ա

ԱՏՈՏՆԱԿԻ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Հնձար Շավարշի Մանուկյանի (ծնված՝ 1943 թվականի հունիսի 3-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 28-րդ փողոցի թիվ 1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները և քանդել թիվ 2 ավտոտնակը՝ 28,32 քառ.մետր արտաքին մակերեսով (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2532547 վկայականը, տրված 2008 թվականի սեպտեմբերի 26-ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2020 թվականի նոյեմբերի 9-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Հնձար Շավարշի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 28-րդ փողոցի թիվ 1 հասցեի տնամերձ հողամասում 2009 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տուն նկուղը և 1-ին հարկը՝ ընդհանուր 281,32 քառ.մետր, թիվ 2 ավտոտնակը՝ 28,32 քառ.մետր, թիվ 3 ծածկոցը՝ 11,35 քառ.մետր, թիվ 4 և 5 պարիսպները՝ ընդհանուր 9,48 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի, 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Հնձար Շավարշի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 28-րդ փողոցի թիվ 1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1.Հնձար Շավարշի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 28-րդ փողոցի թիվ 1 հասցեի տնամերձ հողամասում թույլատրել քանդելու թիվ 2 ավտոտնակը՝ 28,32 քառ.մետր արտաքին մակերեսով՝ հողամասի ընդլայնման նպատակով:

2.Հնձար Շավարշի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 28-րդ փողոցի թիվ 1 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տուն նկուղը և 1-ին հարկը՝ ընդհանուր 281,32 քառ.մետր, թիվ 3 ծածկոցը՝ 11,35 քառ.մետր, թիվ 4 և թիվ 5 պարիսպները՝ ընդհանուր 9,48 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Զրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006

թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 763 927 (յոթ հարյուր վաթսուներեք հազար ինը հարյուր քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հնձար Շավարշի Մանուկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



2020 թ. դեկտեմբերի 30
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» դեկտեմբերի 2020 թվականի N 957-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՊԱՐԻՍՊԵՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Կոմիտաս Համազասպի Գրիգորյանի դիմումը՝ Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 10-րդ փողոցի թիվ 10/4 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի կառուցապատման 118,5 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում իր կողմից ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 6,5 քառ.մետր արտաքին մակերեսով պարիսպն իրեն օտարելու մասին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29122020-07-0176, տրված 2020 թվականի դեկտեմբերի 29-ին, անհատ ձեռնարկատեր Հակոբ Մարգարյանի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 24-ին տրված հողամասի հատակագիծ)։

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35 և 35.1-րդ կետերով, **որոշում եմ.**

1.Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 10-րդ փողոցի թիվ 10/4 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի կառուցապատման 118,5 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 6,5 քառ.մետր մակերեսով պարիսպն օտարել կառույցն իրականացրած Կոմիտաս Համազասպի Գրիգորյանին։

2.Պարտավորեցնել Կոմիտաս Համազասպի Գրիգորյանին՝ մուծելու հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 536 094 (հինգ հարյուր երեսունվեց հազար իննսունչորս), պարիսպի վաճառքի արժեքը՝ 33 800 (երեսուներեք հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ։

3.Հանձնարարել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանին՝ ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարների վճարումից հետո 10-օրյա ժամկետում գնորդի հետ կնքելու անշարժ գույքի օտարման պայմանագիր։

4.Ընդունել ի գիտություն, որ գույքի օտարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում։

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա։

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 30
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» դեկտեմբերի 2020 թվականի N 956-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1. Ժորժ Էդմոնի Թումային սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 3-րդ թաղամասի թիվ 3/10 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ երկհարկանի բնակելի տան և քրաե պարիսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ժորժ Էդմոնի Թումային որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՌՈՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 30
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» դեկտեմբերի 2020 թվականի N 955-Ա

ՍՈՆԱ ԴԱՎԻԹԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ԴԱՍԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԾԱՌԱՅՈՂԻ ԴԱՍԱՅԻՆ
ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջով, **որոշում եմ.**

